ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թվականի հունիսի 8-ին տեղի ունեցավ 3-րդ «բ» դասարանի հերթական ծնողական ժողովը, որին ներկա էին բոլոր ծնողները և դասվար Հասմիկ Հակոբյանը: Ժողովը վարում էր դասվար Հասմիկ Հակոբյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1)2017-2018 ուսումնական տարվա արդյունքների ամփոփում:

2)Ընթացիկ հարցերի և էքսկուրսիայի քննարկում:

1. Լսեցին.- 2017-2018 ուսումնական տարվա արդյունքների ամփոփման հարցը:

Դասղեկը ներկայացրեց դասարանի ընդհանուր վիճակը, ամբողջ տարվա ընթացքում կատարված աշխատանքը: Ներկայացրեց դասարանի առաջադիմությունը: Դասարանում սովորում են 33 աշակերտ,որից 6-ը գերազանց առաջադիմություն ունեն.

1.Անտոնյան Արսինե Արսենի

2.Ավագյան Վահան Վահեի

3.Գալստյան Արփինե Ստեփանի

4.Գինոսյան Մարատ Հայկի

5.Իսախանյան Արսեն Սևակի

6.Հովհաննիսյան Կարեն Գևորգի

Դասարանի աշակերտներից 10-ը հարվածային են, որոնց մեջ կան աշակերտներ, որոնք ունեն 1 կամ 2 առարկայից 8 գնահատական: Դասվարը ծնողներին ասաց նաև, որ դասարանում կան աշակերտներ ,որոնք մի փոքր ավել աշխատասիրություն ցուցաբերելու դեպքում ավելի լավ արդյունքներ կարող են ապահովել:

Որոշեցին՝

Ավելի հետևողական լինել աշակերտների ուսումնական գործընթացին, որովհետև դասարանում կան աշակերտներ, որոնք կարող են ավելի բարձր առաջադիմություն ապահովել: Որոշեցին նաև ամառային արձակուրդներին հանգստանալուց բացի ծնողները երեխաների հետ աշխատեն ,որպեսզի նրանք չմոռանան անցած նյութը, իսկ թերացող աշակերտների հետ աշխատեն,դրանք շտկելու համար:

2. Լսեցին.- Ընթացիկ հարցեր

Ընդհանուր առմամբ երեխաները կարգապահ են,բայց շատ շարժուն են և պետք է ուշադիր լինել ցանկացած պահի: Կարգավորել պակաս համազգեստների հարցը,

շատ ուշադիր լինել տարվա ընթացքում անհրաժեշտ կեցվածք, սանրվածք ապահովելու համար: Քննարկվեց նաև տարեվերջյան էքսկուրսիայի հարցը: Առաջարկվեց երեխաներին էքսկուրսիա տանել Սևան: Էքսկուրսիայի ուղղությունը որոշելիս հաշվի է առնվել նաև երեխաների կարծիքը:

Որոշեցին.

Ավելի հետևողական լինել երեխաների կարգապահության նկատմամբ: Էքսկուրսիայի կազմակերպչական հարցերով կզբաղվեն ծնողական խորհրդի անդամները (անհրաժեշտ գումարի հավաքում,տրանսպորտի և սնունդի հետ կապված հարցերի լուծում): Ճշտվեց տրանսպորտի և տեղի արժեքը, հաշվարկվեց ,թե մոտավորապես որքան գումար կծախսվի երեխաների սնունդի հարցը լուծելու համար և առաջարկվեց ծնողական խորհրդի մոտ հավաքել անհրաժեշտ գումարը/1 աշակերտի համար 3000 դրամ/՝ էքսկուրսիան կամակերպելու համար:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Ա. Սարգսյան

Քարտուղար՝ Ա. Անտոնյան